ՀՖՖ ԿՈՒՄԲԵՐԻ ԱՐՏՈՆԱԳՐՄԱՆ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ 2017

2016/2017 մրցաշրջան

ՀՖՖ ԱԿՈՒՄԲՆԵՐԻ ԱՐՏՈՆԱԳՐՄԱՆ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ 2017

2016/2017 մրցաշրջան

ՀՖՖ Արտոնագրման բաժին
Օգոստոս 2017թ.

Հարգելի բարեկամ,

ՀՖՖ Արտոնագրման բաժինը Ձեզ է ներկայացնում ՀՖՖ ակումբների արտոնագրման համեմատական վերլուծության հինգերորդ հրատարակությունը 2016/2017 թվականների մրցաշրջանի և 2016 թվականի ֆինանսական տարվա վերաբերյալ: Այն ամբողջապես վերաբերում է հայկական ակումբային պրոֆեսիոնալ ֆուտբոլին՝ իր մեջ ներառելով ՀՀ Բարձրագույն խմբի ակումբների մասին մանրամասն տեղեկատվություն համեմատական կարգով: Այս փաստաթուղթը հրատարակվում է հինգերորդ տարին անընդմեջ և շարունակում է հանդիսանալ ամենամյա սկզբունքով հրապարակվող միակ փաստաթուղթը, որը պարունակում է հայկական ակումբների և հայկական ֆուտբոլի վերաբերյալ ֆինանսական, ենթակառուցվածքային, մարզչական, կադրային, իրավական և այլ կարևոր տեղեկատվություն:

Այս զեկույցն իր մեջ ներառում է 2016/2017 թվականների մրցաշրջանի և 2016 թվականի ֆինանսական տարվա ընթացքում հավաքագրված ողջ տեղեկատվությունը, որոնք ակումբները ներկայացրել են ՀՖՖ ակումբների արտոնագրման և վերահսկողության գործընթացի շրջանակներում: Զեկույցում նաև անդրադարձ է կատարվում 2017/2018 թվականների մրցաշրջանի արտոնագրման գործընթացին և արտոնագրային որոշումներին, քանի որ նշված մրցաշրջանի արտոնագրերն ակումբներին շնորհվել են 2016/2017 թվականների մրցաշրջանի ընթացքում:

Այս անգամ զեկույցում ներառել ենք նաև այն նշանակալից իրադարձությունները, որոնք տեղի են ունեցել նախորդ մրցաշրջանի ընթացքում, և որոնք դուրս են ակումբային ֆուտբոլի շրջանակներից, ինչպես օրինակ նոր ենթակառուցվածքների կառուցումն է:

Վերոնշյալ տեղեկատվությունը չէր լինի հասանելի և ակումբների արտոնագրման համեմատական զեկույցը չէր դառնա իրականություն առանց մեր ակումբների կողմից՝ համապատասխան աջակցություն և պատրաստակամություն ցուցաբերելու: Այդ առումով մեր խորին շնորհակալությունն ենք հայտնում ՀՀ Բարձրագույն խմբի բոլոր ակումբներին իրենց աջակցության և սույն զեկույցի կազմմանը մասնակցություն ցուցաբերելու համար:

Վստահ ենք, որ ՀՖՖ ակումբների արտոնագրման համեմատական վերլուծություն զեկույցը կոչված է բարձրացնելու և ավելացնելու հայկական ֆուտբոլում առկա թափանցիկության մակարդակը, ինչը հանդիսանում է ՀՖՖ քաղաքականության անկյունաքարերից մեկը:

NOX
NOX
FOOTBALL FEDERATION OF ARMENIA

ԳԼՈՒԽ 1. ԱՐՏՈՆԱԳՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ

Արտոնագրման գործընթաց

Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի հիմնական առաքելություններից մեկը՝ Արտոնագրման և վերահսկողության գործընթացի ապահովումն ու անընդհատ բարելավումն է: Այդ տեսանկյունից ավարտված մրցաշրջանը բեղմնավոր էր կատարված ծավալուն աշխատանքով: Ձեռքբերումներին առավել մանրամասն կարելի է ծանոթանալ ներկայացված վերլուծությունում:

2016/2017 թթ. արտոնագրման գործընթացին մասնակցած ակումբների տրամադրած տեղեկության հիման վրա՝ պահպանելով գաղտնիության պատշաճ մակարդակը, ՀՖՖ Արտոնագրման բաժինը կազմել է այս համեմատական վերլուծությունը՝ նպատակ հետապնդելով առավել մանրամասն ներկայացնել հայկական ֆուտբոլի ներկայիս իրավիճակը ու առկա մարտահրավերները:

Վերլուծության տարբեր հատվածներում ներկայացված են ակումբներին թե՛ ազգային ու թե՛ եվրագավաթների մասնակցելու իրավունք ընձեռող արտոնագրեր շնորհելու մասին որոշումների պատմությունն ու վիճակագրությունը, հայ ֆուտբոլասերի մոտ առկա հետաքրքրության մակարդակը խաղի նկատմամբ՝ արտացոլված մարզադաշտ հաճախելու վիճակագրությամբ, հայկական ֆուտբոլային ակումբներում հանդես եկած ֆուտբոլիստների տարիքն ու քաղաքացիությունը, ինչպես նաև վերոնշյալ ակումբների ֆինանսական հաշվետվությունների վրա հիմնված տեղեկություններ եկամուտների ու ծախսերի մասին:

Արտոնագրման բաժնի պատասխանատվության ներքո է գտնվում նաև Հայաստանում մարզչական կրթության կազմակերպման ու անցկացման աշխատանքները: 2017 թվականին ՈՒԵՖԱ–ի մարզչական կոնվենցիայի անդամ Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիան որոշեց մշակել ու անցկացնել մարզչական ներածական դասընթաց: Այն նպատակ էր հետապնդում մարզչական գործի մասին նվազագույն տեղեկություն ունեցող դիմորդներին պատրաստել ՈՒԵՖԱ Բ արտոնագրի դասընթացներին: Այս տարի ձեռք բերած փորձի հիման վրա ՀՖՖ Արտոնագրման բաժինը հաջորդ մրցաշրջանում շտկումներ կիրականցնի՝ նվազագույնի հասցնելով թերացումները ու բարձրացնելով մարզչական դասընթացների մակարդակը:

8 ԱԶԳԱՅԻՆ
ԱՐՏՈՆԱԳԻՐ

6 ՈՒԵՖԱ-Ի
ԱՐՏՈՆԱԳԻՐ


2004-2018թթ ՀՖՖ Ալբոմների ստացած և մերժված Ազգային արտոնագրեր
10
9
8
7
6
5
4
3
2
1
0
4
8
1
7
3
7
1
8
8
8
8
8
9
8
8
1
7
8
2004
2005
2006
2007
2008
2009
2010
2011
2012
2013/2014
2014/2015
2015/2016
2016/2017
2017/2018
Ստացած
Մերժված
Հետ Կանչված

2008-2018թթ ՀՖՖ Ակումբների ստացած և մերժված ՈՒԵՖԱ-ի արտոնագրեր



ԳԼՈՒԽ 2. ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐ

2016/2017 ֆուտբոլային մրցաշրջան
Ձեռբերումներ

Ավարտված ֆուտբոլային մրցաշրջանը նշանակալից էր Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի համար մի քանի ձեռքբերման արդյունքում:

◆◆◆

2016 թվականի դեկտեմբերի 9-ին հայտնի դարձավ, որ Հայաստանն առաջին անգամ իր պատմության ընթացքում կընդունի ՈՒԵՖԱ-ի մինչև 19 տարեկանների եզրափակիչ փուլի հանդիպումները: Հայաստանի այդ տարիքային խմբի հավաքականը կմասնակցի եզրափակիչ փուլին ընդունող կողմի կարգավիճակում:

Մրցաշարի հանդիպումները կկայանան Երևանի Վազգեն Սարգսյանի անվան Հանրապետական մարզադաշտում, ԿԱ ՊԵԿ մարզահամալիրի մարզադաշտում, «Բանանց» և «ՀՖՖ Ֆուտբոլի Ակադեմիա» մարզադաշտերում:

2005 թվականին Հայաստանի Մ–19 տարեկանների հավաքականը կարողացել է նվաճել այդ տարիքային խմբի ՈՒԵՖԱ-ի եզրափակիչ փուլի ուղեգիր ու այդ փուլում տոնել մեկ հաղթանակ:

◆◆◆

ՀՖՖ Արտոնագրման բաժինը անմիջական մասնակցություն է ունեցել նաև Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի 9-ամյա ռազմավարական ծրագրի մշակմանը (2017-2025թթ.): Ռազմավարական փաստաթղթի ստեղծման ընթացքում հաշվի են առնվել համաշխարհային լավագույն փորձը, հայկական ֆուտբոլի առանձնահատկությունները և բոլոր շահառուների կողմերն ու իրենց կարիքները:

◆◆◆

Արտոնագրման բաժնի կողմից կազմակերպած Մարզչական կրթության դասընթացների հետագա բարելավման նպատակով 2017 թվականին առաջին անգամ ներմուծվեց ու հաջողությամբ կազմակերպվեց մարզչական ներածական մեկշաբաթյա դասընթաց, որը նախորդեց ՈՒԵՖԱ Բ մարզչական կարգի դասընթացին: Մինչ ներածական դասընթացի ներմուծումը ՀՖՖ Արտոնագրման բաժինը ուսումնասիրեց Եվրոպական առաջատար ֆուտբոլային երկրների փորձը, խորհրդակցեց ՈՒԵՖԱ-ում մարզչական կրթությունը անդամ ասոցացիաներում վերահսկող պատասխանատուների հետ, որից հետո մշակվեց մեկշաբաթյա ծրագիր: Վերջինս ներառում էր ոչ միայն տեսական ու պրակտիկ մարզումների կազմակերպման հմտությունների դասաժամեր, այլ նաև ծանոթացնում ուսանողներին մարզական հոգեբանության հիմունքներին:

◆◆◆

Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիան ավարտված մրցաշրջանում դարձավ Football Social Responsibility ծրագրի անդամ: Ծրագիրը կենտրոնանում է հայկական ֆուտբոլի բոլոր ոլորտների ուսումնասիրման և զարգացման վրա, որոնք հետաքրքրություն են առաջացնում ՀՖՖ-ի և երկրպագուների համար: Մասնավորապես՝ վերջիններիս ներգրավվածությունը որոշումների կայացման գործընթացում տեղական և ազգային մակարդակների վրա, նրանց մասնակցությունը երկարաժամկետ կայունության ծրագրի զարգացմանը ակումբային մակարդակի վրա, կապի ամրապնդումը ազգային հավաքականի և ակումբների միջև, ինչպես նաև մարզադաշտի և խաղի անցկացման ընդհանուր մթնոլորտի բարելավումը:

Ծրագիրը բաղկացած է 4 հիմնական ճյուղերից՝

1.երկրպագուներ

2.ֆուտբոլի ասոցիացիա

3.ակումբներ

4.այլ արտաքին շահառուներ (կառավարություն, ոստիկանություն, այլ սպորտային կազմակերպություններ, հովանավորներ)

ԳԼՈՒԽ 3. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ

Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի ռազմավարության կարևորագույն նպատակներից մեկը՝ ֆուտբոլային ենթակառուցվածքների զարգացումն ու բարելավումն է: Այս տեսանկյունից 2016 և 2017 թվականների ընթացքում իրականացված աշխատանքները արժանի են առանձին ուշադրության:

2014 թվականին սկիզբ էին դրվել Վանաձորի ֆուտբոլի ակադեմիայի կառուցման աշխատանքները, իսկ 2016-ի հոկտեմբերի 29-ին տեղի ունեցավ ակադեմիայի բացման արարողությունը: Այն հնարավորություն կընձեռի Վանաձորի պատանի ֆուտբոլիստներին մարզվել արհեստական 1 և բնական խոտածածկով 3 խաղադաշտերում, որոնք կառուցված են նոր սերնդի տեխնոլոգիաներով և համապատասխանում են ՖԻՖԱ-ի և ՈՒԵՖԱ-ի կողմից պրոֆեսիոնալ ֆուտբոլի համար սահմանված չափորոշիչներին:

2017 թվականի ապրիլի 12-ին, ՈՒԵՖԱ-ի նախագահ Ալեքսանդր Չեֆերինի՝ Հայաստան կատարած պաշտոնական այցի օրը իրականացվեց Վաղարշապատի ֆուտբոլի ակադեմիայի հիմնարկեքի խորհրդանշական արարողությունը: Ակադեմիայի կառուցման ավարտը նախատեսված է 2017 թվականի հոկտեմբեր ամսին: 3 բնական և 1 արհեստական՝ տրիբունայով



2017 թվականին մեկնարկել է Արմավիրի ֆուտբոլի ակադեմիայի կառուցման աշխատանքները՝ Արմավիրի Հոբելյանական մարզադաշտի հիմքի վրա: 1 բնական, 1 արհեստական: Նույն ժամանակահատվածում սկսվել է Սիսիանի ֆուտբոլի դպրոցի կառուցման աշխատանքները: Այն կներառի մեկ արհեստական խաղա դաշտ՝ տրիբունայով, ինչպես նաև անհրաժեշտ հարակից ենթակառուցվածքներ:

15
10

ԳԼՈՒԽ 4. ՀԱՃԱԽԵԼԻՈՒԹՅՈՒՆ

Հաճախելիություն

Հայկական ֆուտբոլի նկատմամբ հետաքրքրության հիմնական չափանիշը՝ հանդիպումների ժամանակ ֆուտբոլասերի քանակությունն է մարզադաշտերում:

2016/2017 մրցաշրջանում հաճախելիության ցուցանիշների հակառեկորդ է սահմանվել: Եթե 2015/2016 մրցաշրջանում ՀՀ Բարձրագույն խմբի տնային հանդիպումների հաճախելիության ցուցանիշը կազմում էր 68400 հանդիսական և սա դրական միտում էր, ապա ՝ ավարտված մրցաշրջանում գրանցվել է վերջին տարիների ամենացածր ցուցանիշը՝ 48575 հանդիսական: Նման ցուցանիշը նաև պետք է դիտարկել ռեկորդային ցածր քանակությամբ (6 ակումբ) մասնակիցներով առաջնության ենթատեքստում:

Ամենաշատ երկրպագու տնային հանդիպումների ժամանակ ապահովում է Երևանի Բանանցը, որի խաղերը այս տարի դիտել են 11200 հանդիսական: 52%-ով կրճատվել է Գանձասար–Կապանի տնային հանդիպումներին ներկա հանդիսատեսների քանակը՝ 20,550–ից՝ 8,800 հանդիսական: Այս փաստը հիմնականում կարելի է բացատրել մարզադաշտի փոփոխման հետ: Ամենացածր հաճախելիությունը գրանցվել է Փյունիկի հանդիպումներին՝ 5800 հանդիսական: Դանդաղ, բայց հաստատուն քայլերով առաջ է շարժվում Արարատը, որի տնային հանդիպումները այս տարի մարզադաշտում դիտել են 6900 հանդիսական՝ նախորդ մրցաշրջանում գրանցված 4250 հանդիսական փոխարեն:

ՀՀ Առաջին խմբի առաջնության նկատմամբ նույնպես հետաքրքրության անկում է: 2016/2017 թվականներին գրանցված արդյունքը գրեթե համընկնում է 2014/2015 մրցաշրջանի արդյունքի (9150 ֆուտբոլասեր) հետ՝ 9105 հանդիսական: Նախորդ մրցաշրջանի համեմատ հանդիսատեսների թիվը կրճատվել է 10%-ով:

Նվազել է նաև ՀՀ Գավաթի խաղարկության հաճախելիության ցուցանիշները: 2015/16 թթ. մրցաշրջանում գավաթային հանդիպումները այցելել էին 9500 հանդիսական, մինչդեռ 2016/2017 մրցաշրջանում այդ թիվը կազմել է ընդամենը 5600 հանդիսական: Նվազել է նաև եզրափակիչ հանդիպման օրը մարզադաշտ այցելած հանդիսատեսների քանակը. 2000 ֆուտբոլասեր՝ 3000–ի փոխարեն:

ՀՀ Բարձրագույն խմբի առաջնության հաճախելիություն



ՀՀ բարձրագույն խմբի մասնակիցների միջին այցելությունը





2017
48575

2016
68400

ՀՀ ԱՌԱՋԻՆ ԽՄԲԻ ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆ ՀԱՃԱԽԵԼԻՈՒԹՅՈՒՆ 2016/2017ԹԹ.



Ընդամենը՝ 9105 հանդիսական

ՀՀ ԳԱՎԱԹԻ ԽԱՂԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՃԱԽԵԼԻՈՒԹՅՈՒՆ 2017



* Եզրափակիչ հանդիպմանը ներկա է եղել 2000 հանդիսական


ՀՀ Գավաթի Հաճախելիության տենդենց 2010-2017 ԹԹ
25000
20000
15000
10000
5000
0
19450
15938
22260
13200
8800
9500
5600
2010
2011
2012/2013
2013/2014
2014/2015
2015/2016
2016/17

ԳԼՈՒԽ 5. ՄԱՐԶՉԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ ԵՎ ԱՐՏՈՆԱԳՐԵՐ

ՀՖՖ Մարզչական դասընթացներ և մարզչական արտոնագրեր

Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի Արտոնագրման բաժինը շարունակում է մարզչական դասընթացների մշտական բարելավումն ու աշխարհագրական ընդլայնումը:

2017 թվականին Արտոնագրման բաժինը առաջին անգամ կազմակերպեց ու անցկացրեց ՀՖՖ մարզչական ներածական մեկշաբաթյա դասընթացը (ՈՒԵՖԱ-ի C կարգի դասընթացների համարժեք ծրագիր): Այն կոչված էր առավելագույնս պատրաստելու դիմորդներին ՈՒԵՖԱ-ի B կարգի արտոնագրի դասընթացներին: Մեկշաբաթյա դասընթացից հետո մասնակիցները հանձնեցին միջանկյալ քննություն (տեսություն և պրակտիկ մարզումներ), որը հնարավորություն տվեց նրանց մասնակցել B կարգի դասընթացներին: Հաշվի առնելով առաջին տարվա փորձն, ինչպես նաև մարզչական կրթության հրահանգիչների ու մասնակիցների դիտարկումները, ներածական դասընթացների հետագա կատարելագործումը կլինի ՀՖՖ Արտոնագրման բաժնի առաջնային նպատակներից մեկը:

Զուգահեռաբար մեկնարկեցին ՈՒԵՖԱ-ի A կարգի արտոնագրի դասընթացները: 2008, 2010, 2011, 2012, 2014, 2015 թվականներին կազմակերպած երկրորդ մակարդակի մարզչական արտոնագրի դասընթացներից հետո, սա թվով 7-րդ նման փորձն էր ՀՖՖ Արտոնագրման բաժնի համար:

Հարկ է նշել նաև, որ 2017 և 2018 օրացույցային տարիների ընթացքում Արտոնագրման բաժինը պլանավորում է անցկացնել ներածական և B կարգի դասընթացներ Հայաստանի առնվազն 3 մարզերում: Հայաստանի Ֆուտբոլի Ֆեդերացիան՝ ֆինանսական աջակցություն ստանալով Եվրոպական ֆուտբոլային գերատեսչական մարմնից, մարզերում կազմակերպած դասընթացների համար մասնակիցներից անդամավճար չի գանձի:

2018 թվականին ՀՖՖ Արտոնագրման բաժինը՝ դիմորդների բավարար քանակի առկայության դեպքում, կկազմակերպի ՈՒԵՖԱ-ի ՊՐՈ կարգի դասընթաց, որը կլինի երրորդը Հայաստանի Հանրապետությունում:

ԳԼՈՒԽ 6. ՖՈՒՏԲՈԼԻՍՏՆԵՐ ԵՎ ԼԵԳԻՈՆԵՐՆԵՐ

Ֆուտբոլիստներ և լեգիոներներ

Հայաստանի Բարձրագույն խմբի առաջնության մասնակից ֆուտբոլիստների համեմատական վերլուծությունը հնարավորություն է տալիս ավելի լավ հասկանալ հաջողությունների կամ ձախողումների պատճառը:

Երկրի գործող չեմպիոն Երևանի Ալաշկերտը ավարտված մրցաշրջանում հիմնականում վստահում էր փորձված, 24-ից 30 տարեկան ֆուտբոլիստների: Ալաշկերտում խաղային ժամանակ ստացած ֆուտբոլիստների միջին տարիքը ամենաբարձրն է մասնակից ակումբների շարքում՝ 28.44 տարեկան: Ալաշկերտը կազմում ուներ նաև բավական քանակության լեգիոներներ՝ այս ցուցանիշով զիջելով միայն Գյումրիի Շիրակին:

Վերջինս հիմնականում վստահում էր 21-ից 23 տարեկան ֆուտբոլիստների՝ գերազանցելով այս քանակով բոլորին: Բայց երիտասարդների վստահելու ցուցանիշով Շիրակը կրկին երկրորդն է:

Բոլորից շատ երիտասարդներին վստահում էր Երևանի Փյունիկը. ֆուտբոլիստների միջին տարիքը մոտ 22 տարեկան է: 30 տարեկանից բարձր ֆուտբոլիստ երևանյան ակումբում ընդհանրապես չկա: Փյունիկի կազմում առաջնությանը մասնակցել են ընդամենը 4 լեգիոներ. սա նույնպես ռեկորդային ցուցանիշ է:

Առավել հավասարակշռված կազմն ունեցող Գանձասար–Կապանը արդյունքում գրավեց 2-րդ հորիզոնականը:

Վերջին հորիզոնականում հայտնված Երևանի Արարատը՝ ինչպես և Ալաշկերտը, վստահում էր փորձառու ֆուտբոլիստների (20 ֆուտբոլիստ՝ 24-ից 30 տարեկան հասակում) ու կազմում ուներ 11 լեգիոներ: Վերջիններս, սակայն, դրական արդյունք արարատցիներին չապահովեցին:


2016/2017 թթ. ՀՀ Բարձրագույն խմբում հանդես եկած ֆուտբոլիստներ
32
27
22
17
12
7
2
-3
Ալաշկերտ
Գանձասար
Շիրակ
Փյունիկ
Բանանց
Արարատ
19-20 տարեկան
21-23 տարեկան
24-30 տարեկան
30 տարեկանից բարձր
Լեգիոներ
* Միջին տարիքը՝ 24.79

45

ԳԼՈՒԽ 6. ԵԿԱՄՈՒՏՆԵՐ ԵՎ ԾԱԽՍԵՐ

Եկամուտներ և ծախսեր

Ինչպես և նախորդ տարիներին, այս անգամ էլ հայկական ֆուտբոլային ակումբները՝ ՀՖՖ Ակումբների արտոնագրման կանոնակարգին համապատասխանելու համար, ներկայացրել են ֆինանսական աուդիտ, որը հետագայում ներկայացվել է Արտոնագրման բաժին: Ֆինանսական հաշվետվությունները հնարավորություն են տալիս տեսնել ակումբների հաջողության կամ ձախողման պատճառները կազմակերպության ֆինանսների կառավարման տեսանկյունից:

Ֆինանսական չափանիշի պատշաճ իրագործումը պարտադիր պահանջ է՝ ՈւԵՖԱ-ի մրցաշարերին մասնակցելու արտոնագիր ստանալու համար: Արտոնագիր ստանալու հայտ ներկայացրած բոլոր ակումբները բարեհաջող անցել են քննությունը:

Ներկայացված վերլուծությունից պարզ է դառնում, որ հայկական ակումբների եկամուտի հիմնական աղբյուրը շարունակում է մնալ ՈւԵՖԱ-ի կողմից ստացված պարգևավճարները՝ եվրագավաթների խաղարկություններին մասնակցելու համար:

Եկամտի երկրորդ կարևորագույն աղբյուրը՝ հովանավորությունից ու գովազդից գոյացած գումարներն են: Հայկական ակումբները դեռ չեն կարողանում գումար վաստակել՝ հեռուստահեռարձակումների վաճառքից: Այս եկամուտը համարվում է հիմնականը ֆուտբոլային խոշորագույն երկրներում:

Ինչ վերաբերում է ծախսերին, ապա Հայաստանում ֆուտբոլային ակումբների տարեկան բյուջեի պլանավորման հարցում պետք է հիմնականում ուշադրություն դարձնեն ընդհանուր գործառնական ծախսերին:

ԵԿԱՄՈՒՏՆԵՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՏԱՐԻ 2016



ԾԱԽՍԵՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՏԱՐԻ 2016



Հաշվապահական հաշվեկշիռ 2016 ֆինանսական տարի



Հեղինակ՝

Վահան Ղարիբյան	**ՀՖՖ Արտոնագրման բաժնի պետի տեղակալ** **ՀՖՖ Մարզչական կրթության ծրագրի համակարգող**

«ՀՖՖ ԱԿՈՒՄԲՆԵՐԻ ԱՐՏՈՆԱԳՐՄԱՆ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ 2017» - ի ստեղծմանը նպաստել են՝

Արմեն Մինասյան	**ՀՖՖ Առաջին փոխնախագահ և Գործադիր տնօրեն,** **ՀՖՖ Ակումբների արտոնագրման համակարգի և վերահսկողության գործընթացի նախագծի ղեկավար**

ՀՖՖ Արտոնագրման բաժին՝

Արթուր Ազարյան	**ՀՖՖ Արտոնագրման բաժնի պետ**

Լուսանկարները՝	***Հակոբ Բերբերյան***

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ
Արտոնագրման բաժին

Հասցե՝ Խանջյան 27, Երևան, 0010, Հայաստան
Հեռ.՝ +37410541069
Ֆաքս՝ +37410547173
Էլ. փոստ՝ licensing@ffa.am
Կայք՝ www.ffa.am